Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 189-րդ, 191-րդ, 192-րդ, 194-րդ, 234.5-րդ, 234.12-րդ, 362-րդ հոդվածներով՝ Դատարանը

Վ Ճ Ռ Ե Ց

1. «Վարդ-1» ՍՊԸ հայցադիմումը բավարարել: Անվավեր ճանաչել ՀՀ Աշտարակ համայնքի ղեկավարի՝ «Վարդ-1» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին 2023 թվականի մայիսի 16-ի թիվ 1352-Ա որոշումը:

2. ՀՀ Աշտարակ համայնքի ղեկավարից հօգուտ «Վարդ-1» ՍՊԸ բռնագանձել 50.000 (հիսուն հազար) ՀՀ դրամ՝ որպես նախապես վճարված պետական տուրքի գումար:

3. Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

4. Վճիռը կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակվելու օրվանից մեկամսյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ՝ **Ն. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**